Արձանագրություն N 3

Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«24» «Հուլիս» 2019թ. ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Հ. Մնացականյան, Մ. Համբարձումյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ.Սարգսյան

1. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Մ.Մխիթարյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ: Հարցման պատասխանը ստացվել է 24.07.19թ., ըստ որի «Օպտշին», «Սմարթլայն», «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ների ֆինանսական չափորոշիչները գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ.Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը)՝ «Օպտշին», «Սմարթլայն», «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ների որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են 22.07.19թ., իսկ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն՝ 23.07.19թ.:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ.Մխիթարյան)

1. Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը և պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/19» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթողներ ճանաչել.

1. «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ 9 և 15 չափաբաժինների մասով՝ 33,850 դրամ պայմանագրային գումարով:

2. «Օպտշին» ՍՊԸ-ին՝ 2,10,11,14 և 21 չափաբաժինների մասով՝ 110,280 դրամ պայմանագրային գումարով:

3. «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին՝ 1,3,5 և 7 չափաբաժինների մասով՝ 1,170,550 դրամ պայմանագրային գումարով:

4. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին՝ 4,6,12,13,16,17 և 20 չափաբաժինների մասով՝ 134,525 դրամ պայմանագրային գումարով:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, **որոշվեց** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/15» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2019 թվականի հուլիսի 25-ից մինչև 2019 թվականի հուլիսի 29-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, **որոշվեց** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/19» ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ և 18-րդ չափաբաժինները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/19» ծածկագրով գնման ընթացակարգի 19-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ.Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Հ. Մնացականյան

---------- Մ. Համբարձումյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան